**Նախագիծ**

**Երկրորդ ընթերցում**

**Կ-558$^{8}$-10.04.2023-ԱՍ-011**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Պրոբացիայի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-48-Ն օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 58-րդ եւ 59-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 2.*** Օրենքի 57-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

**«Հոդված 57. Պրոբացիայի ծառայության կամավորները**

1. Պրոբացիայի ծառայությունն իր առջեւ դրված խնդիրների լուծման նպատակով կարող է ներգրավել կամավորների՝ օրենքով սահմանված կարգով:»:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո: